Հաստատում եմ

Տնօրեն՝ Ա.Շեգունց ______________

_01__ __09___ 2022թ.

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԴԱՍՂԵԿԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆ

Գորիսի N 4 ավագ դպրոց

XII բնագիտամաթեմատիկական 1 դասարան

Դասղեկ՝ Ա. Մկրտչյան

ԿՐԹԱ-ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Աշխատանքի ուղղվածություն	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր
Կազմակերպչական	Կազմել աշակերտների անվանացանկը, դասարանի սոցիալական անձնագիրը:Կազմել դասարանի դաստիարակչական աշխատանքների պլանը: Պլանավորել դաստեկական ժամերի թեմատիկան և անցկացնել ծնողական ժողովներ: Կատարել դասալսումներ,վերհանել առկա խնդիրները:	Անցկացնել դասղեկական ժամեր: Կատարել այլ պլանավորված աշխատանքներ :Օգնել դասարանական խորհրդին աշխատանքների կազմակերպման գործում: Ստուգել աշակերտների բացակայությունները, վերահսկել հաճախումները:Կապի մեջ լինել ծնողների հետ: Կատարել դասալսումներ,վերհանել առկա խնդիրները: Հրավիրել ծնողական ժողով:	Հետևել կարգապահությանը : Անընդհատ կապի մեջ լինել ծնողների հետ,հետաքրքրվել աշակերտների առողջական վիճակով: Անցկացնել դասղեկական ժամ: Ստուգել աշակերտների բացակայությունները,վերահսկել հաճախումները: Ապահովել կապը դասավանդող ուսուցիչների հետ ,վերհանել խնդիրները կապված ուսումնական գործընթացի հետ : Կատարել դասալսումներ,վերհանել առկա խնդիրները: Հրավիրել ծնողական ժողով:	Ստուգել աշակերտների մասնակցությունը և պատրաստվածությունը դասին : Հետևել կարգապահությանը : Կատարել դասալսումներ,վերհանել առկա խնդիրները: Ծնողական ժողովի հրավիրում:
Դաստիարակչական	Աշխատանք տանել ձևավորված դասարանական կոլեկտիվ ի պահպանման	Առողջ միջանձնային հարաբերությունների ստեղծում: Ամրապնդել փոխըմբռնումն ու	Աշակերտների, աշակերտների և պարապող ուսուցիչների միջև ձևավորել բարյացակամ,	Առողջ ապրելակերպի վարքագծի ձևավորում:

	ուղղությամբ:	հանդուրժողականությունը:	ներդաշնակ փոխհարաբերություն-ների:	
Աշակերտների ինքնակառավարման ,ինքնուրույնության խթանում	Դասարանում համակարգված աշխատանք:	Աշակերտների ստեղծագործական գործունեության կազմակերպում	Անհատի ձևավորմանը նպաստող , անհատականությունը ողջունող և ներուժը բացահայտող միջավայրի ապահովում	Աշակերտների արժեքային համակարգի ձևավորում
Ուսումնական	Հետևել աշակերտների ներգրավածությանը դասապրոցեսին, անընդատ կապի մեջ լինել պարապող ուսուցիչների հետ, բացահատել ուսումնական գործընթացից հետ մնացող աշակերտներին և կատարել լրացուցիչ գործառույթներ:	Կապի մեջ լինել ծնողների հետ՝ իրազեկելով նրանց երեխայի առաջադիմության մասին: Կազմակերպել ծնողական ժողով, քննարկել դասարանի ուսումնական գործընթացին վերաբերող առաջնային հարցեր:	Հետևել աշակերտների ներգրավածությանը դասապրոցեսին, Հրավիրել ծնողական ժողով, քննարկել դասարանի ուսումնական գործընթացին վերաբերող առաջնային հարցեր:	Հրավիրել ծնողական ժողով, քննարկել ավարտական և միասնական քննություններին մասնակցելու կարգը.դասարանի ուսումնական գործընթացին վերաբերող առաջնային հարցեր: Ծանոթացնել երկրորդ կիսամյակում ձևավորվող խմբերի ցանկին,:
Աշխատանքի ուղղվածությունը	Հունվար	Փետրվար	Մարտ	
Կազմակերպչական	Դասարանին նախապատրաստել երկրորդ կիսամյակին:Դասղեկի աշխատանքային պլանի կազմում: Ստեղծել դասարանական և	Դասղեկական ժամերի անցկացում, աշակերտների հաճախումների ստուգում, հաճախակի բացակայող աշակերտների հետ համապատասխան	Հրավիրել ծնողական ժողով, իրականացնել դասղեկական ժամեր: Վերահսկել աշակերտների ներգրավվածությանը դասապրոցեսին, հետևել հաճախումներին և կատարել դասալսումներ:	

	ծնողական խորհուրդներ և հաստատել: Ստուգել աշակերտների ներգրավվածությանը դասապրոցեսին:Հետևել խմբերի աշխատանքին:	միջոցառումների նախաձեռնում:Զրույց անցկացնել մասնագիտական կողմնորոշման ուղղությամբ:		
Դաստիարակչական	Հետևողական աշխատանք տանել դասարանի յուրաքանչյուր աշակերտի կրթադաստիարակչական գործընթացում նկատված թերությունների և բացթողումների վերացման ուղղությամբ:	Ռազմահայրենասիրական զրույցներ տանել աշակերտների՝ հատկապես տղաների հետ: Ուսուցիչների հետ առողջ փոխհարաբերությունների ստեղծում:	Առողջ դասարանական մթնոլորտի ստեղծում:	
Աշխատանքի ուղղվածությունը	Ապրիլ	Մայիս		
Կազմակերպչական	Հրավիրել ծնողական ժողով, ստուգել դասարանի սանիտարահիգիենիկ վիճակը:	Դասղեկական ժամերի անցկացում, աշակերտների հաճախումների ստուգում, համապատասխան միջոցառումների		

		նախաձեռնում դժվար դաստիարակվող աշակերտների հետ աշխատելու համար: Կրթության առանձնահատուկ կարիք ունեցող աշակերտների հարմարեցում արտաքին միջավայրին, դպրոցի պայմաններին: Անցկացնել դասղեկական ժամեր՝ դասացուցակով նախատեսված ժամերին		
Դաստիարակչական	Դասից և վարքից անբավարար աշակերտների հետ աշխատել առանձին , որպեսզի շտկել այդ թերությունները: Աշակերտների մոտ ձևավորել բազմաբնույթ կարողություններ (կարգապահություն, մաքրություն, անձնական հիգիենայի, համագործակցություն, փոխօգնություն) :	Օրինակելի վարք և բարձր առաջադիմություն ունեցող սաներին խրախուսելու մասին գեկուցագիր է ներկայացնել տնօրենին.	:	
Ուսումնական	Ուսումնասիրել աշակերտների ընդունակությունները, հետաքրքրություններն	Իրականացնել երեխաների հոգեբանամանկավարժական հետազոտում,	:	

	ու հակումները՝ երեխաների հետ աշխատանքը ավելի արդյունավետ դարձնելու նպատակով	բացահայտել նրանց զարգացման անհատական առանձնահատկությունները: Հրավիրել դասղեկական ժամ, քննարկել երկրորդ կիսամյակի բացթողումներն ու ձեռքբերումները: Գնահատել մեր իսկ կատարած աշխատանքի բնույթն ու կատարողականությունը:		

Դպրոց-ընտանիք կապը

Երեխաները պետք է հասկանան, որ ընտանիքը հանդիսանում է պետության կորիզը: Միևնույն ժամանակ գիտակցեն , որ պետք է սերտ կապի մեջ պահեն դպրոց-ընտանիք կապը, որպեսզի աշակերտները ավելի լավ սովորեն

Աշխատանք ծնողների հետ

•ծնողների հետ երեխաների դաստիարակության հարցերի քննարկում
•դպրոցական կյանքին վերաբերող խնդիրների քննարկում
•դաստիարակչական հարցերում որոշումների համատեղ կայացում
•արտադասարանական աշխատանքներում ծնողների ներգրավվածության ապահովում

Անցկացման օրը	Թեման	Քննարկվող հարցերը	Ուսուցչի անուն, ազգանուն	ծանոթություն
05.10.2022	Դպրոցական կյանքին վերաբերող խնդիրների քննարկում	Բարոյահոգեբանական մթնոլորտ	Ա.Մկրտչյան	
09.11.2022	Ծնողի հետ համատեղ որոշումների կայացում	Որոք են ճիշտ դաստիարակության նախապայմանները	Ա. Մկրտչյան	
19.12.2022	Ժամանակակից մարտահրավերները կրթության ոլորտում	Որոնք են կրթական ժամանակակից խնդիրները :	Ա.Մկրտչյան	
26.01.2023	Ի՞նչ է հաջողված ծնողների ներգրավվածությունը	Ծնողի հաջողված ներգրավվածություն կարելի է հասկանալ որպես ծնողի ակտիվ, կանոնավոր մասնակցություն իր զավակի կրթությանը: Ներգրավվածություն կարող է և տանը լինել, երբ ծնողը երեխաների հետ միասին կարդում է, օգնում է տնային առաջադրանքը կատարելիս և քննարկում է դպրոցի ընթացիկ հարցերը: Որոշ դպրոցներում ծնողը կարող է կամավոր մասնակցություն ունենալ դասարանի գործերում: Նման դպրոցները ծնողների հետ պարբերաբար համագործակցում են և նրանց ներգրավում ուսումնական գործընթացի մեջ:	Ա.Մկրտչյան	
24.02.2023	Ինչպես պետք է օգնեք ձեր երեխային	կարևոր է ընտանիքներին այնպիսի տեղեկությունների հաղորդումը, որը կօգնի նրանց ընտանիքում երեխաների՝ իբրև	Ա.Մկրտչյան	

		առաջադեմ աշակերտների՝ ձևավորման համար նպաստավոր միջավայրի ստեղծմանը		
20.03.2023	Հարգելի և անհարգելի բացակայություններ	Ցանկացած բացակայություն ,եթե պատճառները նշված չէ հարգելի անհարգելի է:	Ա.Մկրտչյան	
27.04.2023	Ժամանակակից տեխնոլոգիաները ուսուցման ոլորտում	Դրական և բացասական կկողմերը	Ա.Մկրտչյան	
22.05.2023	Երկրորդ կիսամյակի ձեռքբերումներն ու բացթողումները	Քննարկել և բացահայտել բացթողումները ,գնահատել կարևոր ձեռքբերումները	Ա.Մկրտչյան	

Ծնողական ժողովներ.

Անցկացման օրը	Քննարկվող հարցերը	Համառոտ բովանդակությունը	ծանոթություն
19.09.2022	ՈՒստարվա խնդիրները և դրանց լուծման ուղիները	Քննարկել առաջին կիսամյակի անելիքներն ու խնդիրները:	
20.10.2022	Ինչպես է ընթանում ուսումնական գործընթացը	Ծանոթացնել հաճախումներին, կազմակերպել հանդիպում պարապող ուսուցիչների հետ	
22.11.2022	Լրացուցիչ պարապմունքների ազդեցությունը ուսումնական գործընթացի արդյունավետության վրա:	Անհարկի բացակայությունների ազդեցությունը	
21.12.2022	Ավարտական քննություններին ընդառաջ: Կիսամյակի ամփոփման շեմին	Ավարտական քննությունների անցկացման կարգի ծանոթացում:Կիսամյակային ամփոփիչ գրավորների տրման կարգի, կիսամյակի ամփոփման նախապատրաստական աշխատանքների մասին	
20.01.2023	Աշակերտների ծանրաբեռնվածության ազդեցությունը	Մասնավոր պարապմունքների ազդեցությունը ուսումնական գործընթացի վրա	

	ուսումնական գործընթացի վրա		
16.02.2023	Աշակերտի արտաքին տեսքի համապատասխանությունը ժամանակակից ուսուցման գործընթացին: Ընթացիկ հարցեր	Աշակերտին ներկայացվող պահանջները կապված արտաքին տեսքի հետ	
18.03.2023	Ծնող-ուսուցիչ հարաբերությունների մասին;	Փոխհարաբերությունների հստակեցում	
19.04.2023	Մասնագիտական կողմնորոշում, ինչ են ուզում դառնալ	Ծնողի դերը մասնագիտական կողմնորոշման հարցում	
16.05.2023	Տարեվերջյան ավարտական քննություններին ընդառաջ; Դպրոցական վերջին զանգ;	Ծնողներին տեղեկացնել քննաշրջանի հետ կապված խնդիրներին, անելիքներին:	